ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2025/114

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 մարտի 2025 թ. N 114

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ

Գործունեության հասցեն՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Պարույր Սևակ 4

Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝ Պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 /երկու/ տարի ժամկետով, 15.09.2022 թ. N 72

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով (այսուհետ՝ Հավատարմագրման կարգ), «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2025 թվականի մարտի 1-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ՇՊՀ, Համալսարան, բուհ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 16 հոկտեմբերի 2023 թ.

վերանայված ինքնավերլուծության ներկայացում՝ 21 մարտի 2024 թ.

փորձագիտական այցի իրականացում՝ 27-30-ը մայիսի 2024 թ.

փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 15 օգոստոսի 2024 թ.

թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում՝ 26 սեպտեմբերի 2024 թ.

ՇՊՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

- **Արմեն Հարությունյան՝** Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Զարգացման գծով պրոռեկտոր, փորձագիտական խմբի ղեկավար:
- **Սամվել Կարաբեկյան՝** Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտորի գլխավոր խորհրդական, փորձագիտական խմբի անդամ:
- **Նարինե Միրականյան՝** Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոնի Ուսուցիչների մասնագիտական զարգացման բաժնի պետ, փորձագիտական խմբի անդամ:
- **Միչեսլավ Սոխա՝** Վարշավայի համալսարանի և Պետական կառավարման դպրոցի պրոֆեսոր, փորձագիտական խմբի միջազգային անդամ:
- **Արփինե Հակոբյան՝** Վանաձորի պետական համալսարանի «Անգլերեն լեզու և գրականություն» բաժնի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձաքննությունն իրականացվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով: Գնահատման արդյունքներն են.

Չափանիշ	Եզրակացություն
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Չի բավարարում
3. Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Բավարարում է
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8. Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Բավարարում է

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ՇՊՀ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների վերանայված ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ բուհի համաձայնությունը, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով բուհի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երկու անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. *ՇՊՀ-ն ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում*

Համալսարանում իրականացվող կրթական ծրագրերը համապատասխան են ՈԱՇ-ի պահանջներին և բուհի առաքելությանը, իսկ դրանց շարունակական բարելավման ռազմավարությունը հիմնականում ապահովում է արժանահավատ որակավորումների շնորհումը: Կատարվել է կրթական ծրագրերի բենչմարքինգ՝ համեմատելով դրանք հայաստանյան և միջազգային հաստատությունների հետ: ՄԿԾ-ներում քիչ են ընտրովի առարկաները, վերջնարդյունք-գնահատում կապը հստակեցման կարիք ունի:

Պրոֆեսորադասախոսական կազմը համալրված է գիտական աստիճաններ և կոչումներ ունեցող մասնագետներով, որոնց կազմում ընդգրկված են նաև երիտասարդ մասնագետներ և գործատուներ: Իրականացվում են կարողությունների զարգացման միջոցառումներ դասախոսների համար, իսկ դասախոսները ներգրավված են գիտահետազոտական ծրագրերում, ինչի շնորհիվ ապահովվում է հետազոտություն-ուսումնառություն կապը: Դասախոսների ընտրությունը չի իրականացվում մրցութային սկզբունքով, նրանց հետ պայմանագրերը կնքվում են մեկ տարի ժամկետով: Առկա է կայունության ռիսկ:

ՄՈՒՀ-ի ռեսուրսները ապահովում են կրթական ծրագրերի իրականացումը՝ ստեղծելով ուսումնառության վերջնարդյունքների ձեռքբերման բարեկարգ միջավայր: Չնայած սարքավորումների առկայությանը, դրանք պահանջում են արդիականացում՝ համապատասխանեցնելով աշխատաշուկայի նորագույն պահանջներին:

2. *Ռազմավարական կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում են, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը*

Կառավարման կառուցվածքները դեռևս զարգացման փուլում են, սակայն նկատվում է առաջընթաց: Համալսարանը հետևում է ռազմավարական ծրագրին և հաշվետվություններ ներկայացնում շահագրգիռ կողմերին:

Որոշումների կայացումը հիմնականում հիմնվում է նկարագրական զեկույցների վրա, այլ ոչ թե տվյալների վրա հիմնված վերլուծությունների, ինչը սահմանափակում է ապացույցահեն քաղաքականության ձևավորումը:

ՇՊՀ-ն մեծ ուշադրություն է դարձնում որակի ապահովման համակարգի զարգացմանը և իրականացնում է բարելավմանն ուղղված միջոցառումներ: Այնուամենայնիվ, ՊԻԳԲ (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում) շրջանակում ներկայումս առավել ընդգծված են պլանավորման և իրականացման փուլերը, մինչդեռ գնահատման և բարելավման մեխանիզմները դեռևս պահանջում են հետագա կատարելագործում:

3. *Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորորումների արժանահավատ շնորհմանը*

ՇՊՀ-ն ունի սահմանված առաջնահերթություններ գիտահետազոտական և ստեղծագործական գործունեության համար: Խրախուսում է դասախոսների և ուսանողների մասնակցությունը գիտահետազոտական նախագծերին:

ՇՊՀ-ն ուժեղացնում է միջազգային գործընկերությունները և շարժունության ծրագրերը: Համալսարանը նաև զարգացնում է արտաքին կապերը:

5. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ՇՊՀ-ի կողմից ներկայացված նախնական ծրագիրն իրատեսական է և ռիսկեր չի պարունակում: Իրականացման դեպքում կբերեն որակական փոփոխությունների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**

2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել ՇՊՀ Կառավարման խորհրդի կողմից հաստատված փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիրը և համապատասխան ժամանակացույցը՝ հաշվի առնելով առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:

3. Հատուկ ուշադրություն դարձնել.

- կառավարման համակարգի կատարելագործմանը, շեշտադրելով բուհի ինքնավարությունը և ակադեմիական կազմի արդյունքահեն նախաձեռնողականությունը՝ պահպանելով Կառավարման խորհրդի և ռեկտորատի բալանսավորված համագործակցությունը,
- դասախոսական կազմի կայունության համար ռիսկերի նվազմանը և երկարաժամկետ զարգացմանը,
- դասախոսների մասնագիտական զարգացման հնարավորությունների ընդլայնմանը՝ հիմնվելով նրանց կարիքների գնահատման վրա, հատկացնելով համապատասխան ֆինանսական ռեսուրսներ և հստակ ժամանակացույց սահմանելով:
- կրթական ծրագրերի արդիականացմանը, ներառելով ընտրովի առարկաներ և ապահովելով դրանց համապատասխանությունը շուկայի պահանջներին,
- որոշումների հիմքում հավաստի տվյալների ներդրմանը, որոնք հիմնված կլինեն կատարողականի գնահատման ցուցիչների վրա, ինչպես նաև դրանց հիման վրա հաշվետվողականության ապահովմանը,
- ՄԿԾ-ների պարբերական վերլուծությունն ու բարելավումը որակի ապահովման համակարգի առանցքային բաղադրիչ դարձնելուն,
- կրթական ծրագրերի մշտադիտարկման իրականացմանը՝ ներքին աուդիտի ժամանակացույցին համահունչ:

3. Հավատարմագրման կարգի 12.1 կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով համալսարանի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները: Գնահատման արդյունքները քննարկել բուհի կառավարման խորհրդում:

4. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել ՇՊՀ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ Վ. Գաբրիելյան

2025 թ., մարտի 1